

# Խոռվութիւններ եւ Հնդանուր Գործադու Արցախի Մէջ Ցոյցեր Երեւանի Մէջ. Կը Պահանջուի Մարզին Միացումը

Արցախի մէջ, ուր արիւնա-  
լի բախումներ տեղի ունեցած  
էին, ծայր տուած գործա-  
դուլը կը շարունակուի եւ  
կացութիւնը կը մնայ ծայր  
աստիճան լարուած վիճակի  
մէջ: Բացի օդային երթևե-  
կէն եւ բժշկական-առողջա-  
պահական հիմնարկներէն,  
բոլոր հաստատութիւնները  
եւ դպրոցները փակ են:  
Ընդհանուր գործադուլ կը  
տիրէ ոչ միայն Ստեփանա-  
կերտի մէջ, այլ նաեւ Մար-

տակերտի, Մարտունիի, Աս-  
կերանի եւ Հաղրութի շրջան-  
ները: Վերջին շրջանի Թուղ  
գիւղին մէջ մասնակիօրէն  
դադրած են նոյնիսկ Գարնա-  
նային դաշտային եւ միւս  
աշխատանքները, ըստ «Ար-  
մէնփրէս»ի:

Մայիս 11ին, Ստեփանա-  
կերտի մէջ, Յատուկ Կառա-  
վարման Կոմիտէի պաշտօնա-  
տեղիին առջեւ հաւաքուած  
են 700 արցախցիներ, քանի  
հոն եկած են ատրպէյճանցի

ղեկավարներ: Արքատի Վո-  
լսկի ներկայանալով բազ-  
մութեան «լսեց մարդկանց  
պահանջները եւ պատասխա-  
նեց նրանց հետաքրքրող մի  
շարք հարցերի», կ'ըսէ Հայկ.  
հեռագրալուրը:

Ամէն կողմ խստօրէն կը  
հսկեն խորհրդային զօրքերը:

Ամէն կողմ խստօրէն կը  
հսկեն խորհրդային զօրքերը:

Ստեփանակերտի մերձա-  
կայքը շուրջ երկու հարիւր

(Շար.ը տեսնել 11րդ էջ)

# ԱՐՑԱԽ - ՀԱՅԱՍՏԱՆ

(Շար. ստաջիև էջէն)

Հայերու եւ ազերիներու միջեւ  
բախումը վերջ գտած է զին-  
ուորական միջամտութեամբ:  
Բանակը կրակած է ցրուելու  
համար կողմողները: Վիրա-  
ւորուած են երեք անձեր  
(ազգութիւնը, ինչպէս  
միշտ, չի յիշուիր) եւ շորս  
զինուորներ:

Քարկոծուած են Երեւան-  
Մարտունի ճամբորդատար  
ինքնաշարժները:

Արցախցիները գործադու-  
լի գիւմած են, հաստատե-  
լէ ետք թէ Արցախի շինա-  
բարական ծրագիրները կը  
գործադրուին գլխաւորաբար  
... ստրալէյճանական զիւ-  
ղերուն գորգացման: Ինու-

Արցախցիները վերահա-  
սու կ'ըլլան նաեւ թէ Մար-  
գր սկսած է ստրալէյճակա-  
նանայ, հսկանաւորութեամբ  
Կառավարման Զատուկ Կո-  
միտէին, որ սկսած է հաշ-  
ուատու գաւնայ Պարուի,  
անտեսելով Երեւանը:

Խնդիր է նաեւ, գաղթա-  
կաններուն հարցը, որ կիր-  
քերը կը բարբոթէ: Ստեփա-  
նակերտի մէջ գաղթական-

ները կը կազմեն տեղւոյն  
բնակչութեան 20 տոկոսը, եւ  
ընդհանուր հայ գաղթական-  
ները Մարզին 10 տոկոսը:  
Արդ, ոչինչ կ'ըլլայ անոնց  
բնակչութեան խնդիրը լու-  
ծելու կամ բարեփոխելու տե-  
սակէտէն:

Յատուկ Կառավարման  
Կոմիտէն, ի մասնաւորի  
անոր նախագահը՝ Արքատի  
Վոյսկի կորսնցուցած են  
բնակչութեան փոտահու-  
թիւնը: Վերոյիշեալ կոմի-  
տէն կը գործէ առանց երբեք  
նկատի առնելու Մարզին  
կուսակցական եւ ներկայա-  
ցուցչական մարմինները,  
որոնք կը պահանջեն նկատի  
առնուիլ եւ Արցախը դուրս  
հանել Պարուի ենթակայու-  
թեանէն:

Ստեփանակերտի կուսակցա-  
կան Կոմիտէի շէնքին առջեւ  
ամէն օր խումբ խումբ մարդիկ  
կը հաւաքուին եւ իրենց միջեւ  
կարծիքի փոխանակութիւն  
տեղի կ'ունենայ: Վոյս-  
քի հետատեսիլէն հարցա-  
դրոյց մը ունեցած է թղթա-  
կիցի մը հետ: Արցախցինե-  
րը որոշած են գործադուլը  
հարստակեղ, մինչեւ որ

իրենց պահանջները գոհա-  
ցում ստանան:

\*\*\*

Երեւանի Մատենադարա-  
նին հրատարակը Մայիս 11ին  
արտօնեալ հաւաք մը կազ-  
մակերպուած, մասնակցու-  
թեամբ աւելի քան 200,000  
հայերու:

Հաւաքին խօսք առած են  
ըստ Արմէնփրէսի մտաւորա-  
կաններ, պետական, հասա-  
րակական կազմակերպու-  
թիւններու ղեկավարներ,  
ժողովրդական երեսփոխա-  
նութեան թեկնածուներ եւ  
ինքնավար Մարզի ներկայա-  
ցուցիչներ:

Խօսք առնողները ար-  
տայայտած են գաւնայան  
խնդիրներու եւ անյոյժ մը-  
նացած հարցերու շուրջ  
- Արցախի մէջ անարդարու-  
թիւններ, Մարզին միացու-  
մը Հայաստանի, Ղարաբաղի  
Կոմիտէի անդամներուն  
բանտարկութիւնը, Հայաս-  
տանի ստրականած օդուորատր,  
աւերեալ շրջաններու գան-  
գաղ վերակառուցումը, որ  
արդեւ կ'ըլլայ Խ. Միութիւն  
ցրուած հայերու վերադար-  
ձին, զիւտակայական  
արդեւքները, գանդուածա-  
յին թուանաւորումները,  
որոնց քննութիւնները չեն  
բացայայտուիր, եւ այլն: